

բիշներ այլ Աղուանից վրայօց պատմութին զրած են, իսկ ինըն Մխիթար ուզեր է շարունակել Մովսիսի զրածը, անէ ետքի յիշատակողներն, և իր օրերոն հանդիպած ներովը. Աղուանից կաթողիկոսաց շարքն այլ կու շարունակէ այն տեղին կամ անձն՝ ուր Դաստիւրանեցին զայրեցընէ, իրեւ յամին 1000 : Բայց Գոյի զրածն պակաս մայ մեղի յայտնուած և զրեթէ անտարակոյս իր խսկագիր օրինակին մէջ. որուն հանդիպելով մենք՝ զմեզ աւելի բաղզաւոր համարիմք քան զկիրակոս և զնմանին. որոց՝ վարպետաց զրածներէն ինչ ինչ՝ և իրնցմէ յետնոց եւս անձանօթ մացեր է հնագ վեց զար. Եւ անշուշտ այս շատերու անձանօթ մալու պատճառաւն է, որ իրը 250 տարի յետ հեղինակին զրովթեան՝ վանական վ. վերոյիշեալ Հարցումն ըրեր և պատաժանը տուեր է, և կու տայ մեր այժմու հետաքրնին բանասիրաց :

## ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

### ՀԱՅԻԱԿԱՆ ՎԵՊ

Ի ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Մ. ԽՈՐԽՆԱՅԻՈՑ

ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆ

(Հար. և վերջ, տես յէջ 97)

**Բ**նսնադասներէ մին, որ սկսաւ զրել անմիջապէս յետ լոյս տեսնելու փրանկ հայագիտին (Աղ. Կարրիկերի) առաջին յօդուածոյն, զուր տեղ ջանացաւ մերժել իրականութիւնը՝ Մալսիսի ի Վարուց ս. Սեղբեստրոսի ըրած փոխառութեան, ենթագրելով վերոյիշեալ տեղն իրը մի ներմուծումն ի Պատմութեան Հայոց», այսինքն, թէ նորա Բ զրոց 83որ զուվին, ինչպէս զայդ կարելի է իմանալ Ասորիկէն, — որ ԺԱ գարու մասենագիր է և քայլ առ քայլ հետեւող խորենացոյն, — իսկզբանէ Մովսիսի չեր պատկանէր, այլ յետոյ ուրեմն

մուծուեցաւ անոր զրոց մէջ՝ թայց գործը յայնում է, որ եթէ այս ենթազրութիւնը ընդունինք, հարկ պիտի ըլլայ մերժել՝ իրեւ ներմուծեալ՝ խորենացոյն պատմութեան ամբողջ առաջին զիրբը, քանի որ անոր վրայօր ալ ամենեւկին յիշատակութիւն չկայ Ասորիկյ մօս :

Երկրորդ քննադատն՝ կարծիք յայտնեց. ամակյան առանց ապացուցի, — թէ խորենացին, հաւասարապէս ինչպէս և հեղինակն վարուց ա. Սեղբեստրոսի, կրնային իրարէ անկախ օգտուիլ հասարակաց աղբերէ մի :

Վերջապէս, Վեհետակոյ Մխիթարեանց քննադատին ընդպարձակ յօդուածն ալ լոյս տեսու. որուն ուղ և ծուծն, մի միայն նախընթաց քննադատին դիտողութեան բարզաւութիւնն է, ի մէջ բերելով սակայն իր կողմանէ. այն հասարակաց աղբերը, որպիսի էր ըստ իր կարծեաց. Մարտիրու տօն ձեցու չալ ննջէնու ձեռօքիօն. Ենծանչու<sup>2</sup>, որ յօդուածի հեղինակին ասելով՝ Դորոշ զարու. կը վերաբերի: կայ, նա և այդ յիշատակարանի հայերէն թարգմանութիւնն, որ կը բովանդակէ իր մէջ զա Պատմութիւն կուտանդիանուի բագաւորի և մօրե նորա Հեղինաց, որ վերջերը ա. Սեղբեստրոսի վարուց հայ թարգմանութեան մէջ մուծուեր է: Հեղինակին եղբակացութեամբ այդ յիշատակարանի թարգմանութիւնն խորենացիւնցին շատ վերջ կատարուած է, այսինքն, Ժ.Ժ. զարուն մէջ և արգէն անփէց վերջը կցուեր է ի սկիբրն եկեղեցական պատմութեան (Փ.) Սոկրատայ, ինչպէս որ կը տեսնենց զայդ ի ձեռագիրս: իսկ գալով խորենացոյն փոխառութեան ի Ասորատայ, զրոց զիսել կու.

1. Առերճ, հայ ամսաթերթ հրատ. ի Տիգիս. յօդուած Ս. Մայիսանեանի, 1892, թիւ 42:

2. Հանդէս Ամսօրեայ հրատ. ի Վեհետ. յօդուած Սոլք. Վարդապէս Պարոնեանի, 1892, թիւ 41:

3. Այդ յիշատակարանի ընագիրն կը գտնուի Ասորիկյ պատմութիւնն մէջ, ի թ. 866, թիրթ 356, իսկ նորա հայ թարգմանութիւնն՝ Վեհետկոյ Մխիթարեանց Մատենադարանի Յայռաւուրոց միոյն մէջ, որ 1441 թուականին զրուած է (թ. 279):

տար պր. կարրիէր, Միհիթաբեանց քննա-  
դատն հակառակ եղակացութեան կը յանգի. նորա ասելով, եթէ և մէկն փոխառութիւն  
ըրած է, զայն Եկեղեցական պատմութեան  
հայ թարգմանչին ըրած է ի Խորենացւոյն,  
քանի որ ինքն Խորենացին իր ձեռքը Սոկրա-  
տայ յունաբէն բնագիրը ունէր<sup>1</sup> :

Այս հերութեամբ չայելով հեղինակին հմտու-  
թեան և նորա ի մէջ բերած բաղմաթիւ կո-  
չումներու և աեղեաց ցուցմանց, զիտնական  
մեծ տիպ մը շանիք։ Հեղինակին մէջ յայտնի  
կը տեսնուի շերմ կամեցորութիւն մը պաշտ-  
պանելու հայ պատմագիրը ինչ բանի մէջ  
որ Ալայ, բայց առ այս կը պակսին անոր  
կէին ունեցու և համոզի փաստեր :

Պր. կարրիէր, — իր եղակացութիւն-  
ները աւելի զօրացընելու համար, և աւելի  
ընզարձակ ընծայեցընելու նպատակաւ իւր  
խնդիրը՝ նկատմամբ խորենացւոյն ըրած փո-  
խառութեան յետապայ ժամանակի յարուց և  
անհարազատ զութիւններէն, որ նոյնպէս  
զգալի է իր Պատմութեան ուրիշ մասանց  
մէջ եւս, — իւր երրորդ յօրուածին մէջ  
քննութեան ենթարկեց նոյն բ զրին 8:87:2  
զլուխը՝ որ յազասո իշխանակցին մեծին  
կոստանդիանոսի՝ և լիկիանեայ» : Ահաւասիկ  
այդ տեղն.

«... կոստանդիանոս մեծարեաց զլիկիա-  
նոս մեծութիւն յոյժ, և ետ նմա կոտու-  
« թեան զքոյր իւր . . . և արբայ ամենայն  
« Արեւելց կացոյց (զնա) . . . թայց . . . (լի-  
և կիանոս) նախ առ ի հաւատսն զտանի  
« պրծող, և երկրորդ առ բարեկործն իւր  
և ապօտամբ՝ Յարոյց հաշածան եկեղեցւոյ,  
և նենգութիւն զաղտնի ընդզէմ կոստան-  
ու զիանոսի. նա և շարիս բազմազան ամե-  
ռ նեցուն հասոյց, որ ընդ իւրով իշխանու-  
և թեամբ էին, ցանկասէրս այս և զարշելի

և ալեւոր, . . . որ և զիին իւր ի մեծ նեղու-  
աթիւն արցէլ, սակա տրփութեան երանել-  
և տյն Գլափիւոյ, վասն որոյ սպան զուրբը  
և Բաթիլիս Ամառից Պանտացը եպիսկո-  
պաս : Եւ իրրեւ յայսնեցաւ զան, ժողո-  
ւ վիաց (լիկիանոս) զօրս ընդդիմանալ պա-  
տերազմաւ (կոստանդիանոսի) : . . . իսկ  
և իրրեւ եկն յազմողն կոստանդիանոս,  
և մատնեաց Աստուած ի ձեռու նորս զլի-  
և կիանոս. յոր ինայեալ պրպէս ի ծերունի  
և և ի քեռայր, ետ աւանելի ի Գաղղիոս  
և հանդիրձ երկաթի կապանօք՝ զնելի ի մե-  
տաղն, զի աղօթեացէ առ Աստուած՝ որում  
և մեղան, թերեւս երկայնամիտ լիցի առ  
և նա : »

Այս քաղուածոյ հատուածին մէջ, արգէն  
խոկ՝ պատմական զիպաց աւանդութեան մէջ  
տեսնուած անձզրիս կէտերու՝ շարց մի, կը  
ցուցընէ թէ Խորենացին անվաստանէլի աղ-  
բերէ մ'օգոտուած է :

Ըստ այսօն, հակառակ վկայութեան հայ  
պատմագրին, լիկիանոս « Օգոստոս » անուա-  
նեցաւ նոյն խս Գաղերիսաէ, 307 տարույն,  
երկրորդ աեղզ բռնելավ տէրութեան մէջ (յետ  
Գաղերիսոսի). խսկ կոստանդիանոս՝ որ արգէն  
խսկ իւր հօր մանուանէն ի վեր (306 թ.)  
և կեսար » էր, ընդունեցաւ « Օգոստոս » տիտ-  
ղոսը նոյնպէս Գաղերիսուէ, լիկիանոսէն տա-  
րի մը վերջը՝ Ապա, 313 Թօսականին,  
լիկիանոս հանդիպեցաւ ի Միլան կոստան-  
դիանոսի, երբ և նորս ցոյըը իրեն կոտ-  
թեան առաւ : Նոյն տարին յաղթելով ա-  
րեւելցան Օգոստոսին, որ էր Մարտինիսոս,  
նա միացուց իր տէրութեան (լիլիրիկէին)  
հետ նա և Արեւելցը : Յետ որոյ մացին երկու  
կայսեր՝ բրուրամին իրարսէ անկափի (չմմ.՝  
Duryuy, Histoire des Romains, VIII,  
յէջ 43 և հետեւեալըն): Վերջապէս, յետոյ  
կոստանդիանոսին դէմ մշած պատերազմին  
մէջ յաղթուելավ լիկիանս՝ պատրուեցաւ ալ թէ  
ի Գաղցիս, ինչպէս կ'աւանդէ  
Սոկրատ (Եկեղ. Պատմ., Գիրը Ա, Վ. Դ.) :

Այս դիառողութիւնին և գլխարուած Գլա-  
փիայի միջադէպն առաջնորդեցին պր. կար-  
րիէրի այն գաղտափարը կազմելու, թէ Խո-

1. Բազմավէպ Համուխարան, յօդուած հ. Բարսով Սարգսյան, 1895, որ և յետոյ ա-  
պանձին դրբուով աւ հրամարակուեցաւ: Եկեղ-  
անձիւն գեղինակին յէջս Ա-թը: Բաղրատու-  
թիւն աշբերներու Վարուց և Սեղեսարոսի  
(ըստ Փ. Սոկրատայ) հայ և յոյն լեզուներով,  
յէջս 4-79:

ρεῖναγήνι αγητ γηπούρι շարադրելու համար դարձակ խոռորդ է Ալիքաստէն և քաղաք իր տեղիկութիւնները անվաւերական աղբերէ մի, որ է՝ Վարդ և Բարսղի Ամասիացւոյ Ալյդ վարուց ուղև և ծածն, որ յինքեան կը պարունակէ Գլափիւռայի առասպելը, հետաւեալն է. — Գյափիւռա աղափին էր Հիկիանուրի կողմօս, և հետասէր կայսեր անդադար հետամըստովեանց պատճառու, կ'որոշէ փափչիլ ի Հայաստան. բայց կը կենայ յԱմասիա և հօն կը բնակի Բարսեղ եպիսկոպոսին հովանաւու.

բոթեան ներքոյ: Այս բանս իմանալով լինի կիանոս՝ կը հրամայէ բերել առ ինքն ի նիւ կութիկա թէ աղջիկը և թէ եպիսկոպոսը. բայց աղջիկն այս ժամանակները կը վախճանի. իսկ եպիսկոպոսն ներկայանալով կայսեր՝ մանուան կը զասապարտուի և մարմինն ալ ծով կը նետուի:

Որպէս զի համոզուինք խորենացւոյն ըրած փոխառութեան վրայ այդ Վարդէն, Կարրիէր ի մէջ կը բերէ անկէց քանի մը տող, որ կը վերաբերին վիկիանոսի արուած պատմոյն ու

Մ. ԽՈՐԵՆԱՑԻ, Բ. 88.

ACTA S. BASILEI, § 21.

... « Եւ իբրեւ եկն յաղթողն կոստանդիանոս, մատնեաց Աստուած ի ձեռո նորա վիկիանոս. յոր խնայեալ որպէս ի ծերունի և ի քեռայր, ետ տանել ի Գաղղիոս \* հանգերձ երկամի կապանօց՝ դնել ի մետազ, զի ազօթեսցէ առ Աստուած՝ որում մեղան, թերեւ երկայնամիա լիցի առ նա » :

... Καὶ σχεδὸν μέχρι θανάτου παιδεύσας αὐτὸν ἀνευ βασιλικῆς καὶ τῆς οἰασοῦν ἀρχικῆς ἔξουσίας, εἰς Γαλλίους \* αὐτὸν ἀποστέλλει κατατοκεῖν. Διὰ γὰρ τὸ εἶναι αὐτὸν γαμβρὸν, οὐκ ἐθανάτωσεν αὐτὸν, τῶν μυρίων θανάτων ὑπατίον, εἰπὼν αὐτῷ ἐπὶ πάστης τῆς Συγκλήτου. Κλεύσον καὶ μετανόησον ἐφ' οἷς ἐτόλμησας, καὶ ἀγαθὲ ἐργαζόμενος μὴ ἐνδόθης ποτε· ἵσως δ Θεὸς θεέως σοι καὶ εὑμενῆς.... γένηται.

Այս յիշատակարանն ծանօթ էր Հիներէն նոյն իսկ Վազէսի (Valois) և Պագիայ (Pagi), յորոց արդէն Վիստոնց (յէջ 219) այս կետին նկատմամբ կոչումն ըրած են, անոնց նման հերցելով այս առասպելիս ինչ և իցէ պատմական արժէք մը անենալը. իսկ ի նորոց, Գորրեա՝ մինչեւ զայն Սիմեոն Մետափրատեայ ժամանակին ընծայեց, որ է ըսել՝ ԺՄԿ զարո զօրծ համարեցաւ<sup>1</sup>: Նյոյն կարծիք յայսնեց նա և թէ այդ վարուց աղբիւն անգամ խորենացին դղած է: Խակ

դասախոսն կարրիէր ներհակը կ'ապացուցանէ, այսինքն, թէ ընդհակառակն խորենացին փոխ առած է իւր պատմական գէպքը յիշեալ Վարուցմէ: Փրանկ զիտնականն միանգամայն կը տարակուսի՝ որ հայ պատմազին իւր ձեռքը այդ Վարքը քնազրով ունէր թէ նոյն իսկ հայ թարգմանութեամբ, որ պահուած է հայկական Յայսմաւուրաց<sup>1</sup> մէջ. և կը համարի, թէ խորենացին ծանօթացած էր այս առասպելին ի հայ թարգմանութեան Սովորաց, որ ի թիւս այլ ներմածմանց՝ կը պարունակէ նա և ս. Սերբեստրոսի Վարքը: Այս վերջինն ահա, նորա տարլով, ծառայած է խորենացւոյն իւրեւ աղբիւր նա և այս իւր Լիկիանոսի առասպելական պատմութեան (Nouv. Sources, յէջ 29):

\* Խորենացւոյն մէջ դրուած է ՀՀՀՀՀ և ի Գաղղիուս ։ բարուվին նման՝ ինչպէս և ի Կրչագիր Վարուց ։ Բարսղիլ = εἰς Γαλλίους, որ յետոյ ի ապագիրէն Acta Sanctorum πετρագրուերէ = εἰς Γαλλίա (Տես Կարրիէր, նորաց. Ալբերգ, յէջ 26): Գաղղիոս դրուած է նա և յաշաբարհացրութեան Հիրակացւոյն (Վենետիկ, 1863, Մատենացրութիւնք Խորենացւոյն, յէջ 594):

1. GÖRRES, Kritische Untersuchungen über die Licinianische Christenverfolgung, Jena, 1873.

1. Յայսմաւուրք հայոց, հրատ. Բ., կ. Պատմ., 1750, միածալ, հմ. և Ալբիլ 26, վիպարին Բարսղի եպիսկոպոսի» յէջն 532-553. Նյոյնպէս և նոր հրատարակութիւնն և. Պադիս 1834, միածալ, յէջն 186-187:

Բայց պր. կարրիերի վերջին կարծիք խիստ սակաւ հիմնական է . նա զրած է այս առղերը , երբ տակափն իրեն ծանօթ չէր և . Սեղբեստրոսի Վարուց հայ թարգմանուածիւնը իր ամբողջութեամբ , Ասկէց վերջ ի վենստիկ լցու տեսած Վարուց ամբողջ օրինակն (ըստ Փ. Սոկրատայ) , նյոյնպէս և իմ ձեռքու զանուած Փ. Սոկրատայ հայ թարգմանութեան ձեռագիրներէն (որդ կը պարանակեն նա և . այդ Վարը ի սկիզբն առաջին գրոց) , յայտնի կը տեսնուի՝ որ անոնց մէջ կը պակսին ինչպէս Հավափիասայի և ս . թարզի միջակպէն , այսպէս և Լիկիանոսի վրայի տուասպէլական մանրամանաւթիւնը : Ասոր համար աւելի հիմնական կը լինի ընդունի՝ թէ իսրենացին օգտուած է ամսիշաբար և . Բարսղի Վարուցմէ , և կամ թէ որիշ որ և է աղբերէ մը , ի բաց առեալ հայերէն Սոկրատը : Եւ այս վերջին կարծիքը ճշմարիտ ալ է , քանի որ այդ վարուց հայ թարգմանութեան մէջ , մինչեւ անզամ այն օրինակն է որ ի հրատարակեալ Յայսմանուրի կը զանուի , կը պակսին լիկիանոսի պատուելուն և աքսորուելուն մանրամանութիւնն :

Պր. կարրիեր որպէս զի ցուցընէ խորենացոյ ծանօթ լինելը Սոկրատայ այն հայերէն թարգմանութեան հետ , որ իւր սկիզբը կցուած ունի ս . Սեղբեստրոսի Վարը . իւր չորրորդ յօդուածոյն մէջ մանրագնին քննութեան կ'ենթարկէ նա և նոյն բ զրոց 8 նորութունը . «Յաղագ Նունէի երանելոյն , եթէ որպէս եղել պատճառը փրկութեան վրաց» : (Nouv. Sources, յէջ 33-47) :

Ծանօթ է որ վար զարձին վրայ ամենէն առաջ զրած է Ռուփինոս՝ այն երկու զրբերէ միջն մէջ , զոր կցած է իւր լատին թարգմանութեան Եւսեբիոսի Եկեղեցական պատմութեան : Ռուփինոս այդ պատմութիւնը կ'աւանդէ մեղ ըստ բանից վրաց թագաւորի մը՝ թակուրեայ , որ Հոռովմայեցոց հետ զինուորութեան մէջ մոտած լինելով , կայսերական թիկնապահաց մասին մը հրամանաւտարութիւն կ'ընէր Ազրիանուպուրոյ ձախող պատերազմին ժամանակ , որ աւարտեցաւ պատսամրութեամբ՝ վաղենափ (378 ատրայն) :

Մի և նոյն պատմութիւնը ըստ Ռուփինոսի , բայց ինչ ինչ պաճուճանութիւններով կ'աւանդէ մեղ նա և Սոկրատ , որ կը գրէր իրը 440 տարւոյն :

Այս կերպով , կը զիսէ պր. կարրիեր , որ երկու պատմութիւնըն ալ զրուած են նաև քան զիսրենացին , ինչ ժամանակի ալ որ ընծայենք մենք նորա պատմութիւնը :

Որդ ես , Ռուփինոսի , Սոկրատայ և Խորենացոյ այս պատմութեանց իրար հետ բաղպատութեան մանրամանաւութեանց համար՝ մասունանիշ ընելով ընձերցովին փրանչ հայաց վախին զիբըք , մէջ կը բերեմ միայն նորայաց բերած վերջական եզրակացութիւնքը այս խնդրոյն նկասմամբ :

Խորենացոյն (Բ. 86) մեղ աւանդած վրաց դարձին պատմութիւնն , ի բաց առեալ մի քանի լրացուցիչ մանրամանաւութիւնքը , — այսինքն են , յասուկ ածուանք , աշխարհագրական ծանօթաթիւնք վրասասնիք , Աստուածաշշնէն կոչումները և մերձեցուցումն Հայոց Պատմութեան հետ , — բոլորովին նուն է Բակուրեայ ըստաներուն , զոր աւանդած են Ռուփինոս և Սոկրատ : Խորենացոյն հաղորդածներն Սոկրատայ Ա զրբին 20որդ զինոյն համառօտութիւնն է . բայց քան զայս աւելի տեսնուած բառերու և բացարութեանց նմանութիւնն կ'առաջնորդէ մեղ զէպ ի Սոկրատայ հայ թարգմանութիւնն : Այս պատմութեան մէջ կայ մասն մի՝ յօրում զգալի է աւելի նմանութիւն մը երկու բնադրաց , Սոկրատայ հայ թարգմանութեան և խորենացոյն , և է այն կտորն որ նուիրուած է լուսակայ խալին սքանչելեաց նկարագրին : Իսկ այդ մասն ալ կը գտնուի միայն Սոկրատայ հայ թարգմանութեան մէջ : Այս առթիւ զիտել կու տանը , որ այդ մասն չկայ յոյն բնադրին մէջ , ուսկից անկարելի էր որ գուրած ձգուած ըլլար , վասն զի զայն չելք գտնել նա և Ռուփինոսի լատին բնագրին մէջ : Հետաւապէս յայտնի է որ խորենացին օգտուած է Սոկրատայ Եկեղեցական պատմութեան հայ թարգմանութեամբ . որ արդէն թարգմանուելու ժամանակ ներմուծումներ ընդունած է . (Nouv. Sources , յէջ 43) :

Ես իմ՝ կողմանէս կրնամ դեռ ուրիշ օրինակներ մատնանիշ ընել Փ. Սոկրատայ մէջ կատարուած ներմուծութեանց, զորս յիշած չէ պր. Կարրիէր:

Ինյաէս՝ օրինակի համար այս՝ որ վկայուածին փրկութեան վրաց՝ Սոկրատայ մօտ կոչուած է պարզապէս « գերի ո համաձայն թուփինոսի (captivis) առանց անոր անուան յիշատակութեան ». իսկ խորենացւոյ մօտ և Նունէ » անունը կը կրէ (տարբ. մի քանի օրինակաց և Նունի ») և Կ'երեւի իրեւ մի « յընկերաց սուրբ կուսանացն Հոփիսիմեանց, որք կատարեցան ի Հայո » , որ է ըսել բառ առ բառ նման հայ թարգմանութեան Փ. Սոկրատայ « Նունի »<sup>1</sup> : Յորմէ նոյնաէս

4. . . . ըստ ասաբերունոյ կնոյն քարոզութեան, սրում անուն էր Նունի՝ յընկերաց սրբութեանց Հոփիսիմեայ, որ է հայո կատարեցան. (Գր. պր. Եղ. յէջ 306 ս. — իսկ Խոր. Բ. 86). Կին մեն, անուն Նունի (մի քանի գր. ունին Նունի)՝ յընկերաց սրբոց Հոփիսիմեանցն ասաբերութիւնում՝ քարոզեաց. . . Յատկապէս, այս երանելի կուսին անունն, ինչպէս Կ'ենթադրեւ մի քանի գիտնակունք (Brossel, Hist. de la Géologie, հա. Ա. յէջ 90), կաղակցութիւն ունի լսակի ոսուս բարին հետ, որ ցուել է քարեպաշտուի, միանձնեռուի. — Nonna արդէն յատկա անուն էր, և այնպէս կը կոչուէր՝ օրինակի համար՝ նաղեանացուցայն մայր (Migne, Հա. 33; յէջ 152): Գրականութեան մէջ Նունի (առ Վրացին՝ Նինոյ) անունն իրեւ կոչումն Վրաստանականութեանուուրուն և ուսոն, առաջնին անդամ յերեան կու զայ Փ. Սոկրատայ Հայ թարգմաննին մօտ և ապա անտի նու և առ Խորենացին, որ բաց այտի կ'աւանդէ մեզ նա և՛ ի Ս. Նունէէ՝ մըրառթեան ժմամանակ՝ Վրաց թագաւորին ընդունած անունը Սիհրան, որ անձնանութիւն Փ. Սոկրատայ: Ապէտ կարելի պիտի ըլլար եղակացընել, թէ հայ պատմագիրն օգտուած է, բաց է Փ. Սոկրատայ, նա և ինչ և իցէ յետապայ, բրենացիք կամ քառար, իմբազութիւն մը նոյն վրացի պատմաթեան: Հեռաւոր խմբագրութեւն մ'ալ յիշեւլ պատմութեան դացէ կարելի է նմարել վրաց Ժամանակագրութեան մասեական մատանիւթեանց մէջ, որ Փ. Պատկանեանին մասեակ (Ժամանակ. Վրաց ի Թիթիքն ժողովը. Լուսաւ. Պաշտօնէին)՝ Սառն CCXXX, բաժին 2; յէջ 225), ծծ-ժի դարւուն կ'ընացրէ և յորում զմեց հետաքրքրութեան երկու ընթերցութեան ալ կը մտանին՝ Նունի և Նինա (Նինոյ). — (Հմ. այդ ժամանակագրութեան հայ բնագիրն = Պատմ. Վրաց, Վենետիկ, 1884, յէջ 44-64:

փոփ առած է խորենացին ։, նա և զմակդիր երանելոյն Նունի և առաքելուի ո (դրա պր. պր. Եղեանցի, յէջ 506 ս) Վրաց, և այն « քաղաք նախագահ ո բացատրութիւնը (գր. պր. Եղեանցի, յէջ 506 թ) Վրաց մայրաքաղաք Մցինեթայի համար ըսուած ։ Այս մանրամասնութիւնը Մեծ Սոկրատայ մէջ կը պակսին ։

Վերյաթուեալ փաստերն՝ անզամ՝ մի եւ աններքելի կերպով կ'ապացուցանեն, թէ խորենացին որ Սոկրատայ կ'իհեցեական պատմութեան օգտուած է, ունէր իւր ձեռքը զգրագիր Փոքր կոչուած Սոկրատայ<sup>2</sup>

Պր. Կարրիէր իւր յաջորդ յօդուածոց մէջ; որ տպուած են մի և նոյն Վենայի Ամօրեաց Հանդիսին մէջ, յառաջ կը վարէ իւր խորագրկութիւնը նորանոր աղքերաց խորենացւոյն, որք յամենայն գեպս Ե՞րբ դարէն աւելի ուշ ժամանակին կը վերաբերի: Ասունկ են. ժամանակադիրն Մալայա<sup>3</sup>, Զորք գարավերդում, Զատկական Քրիստին, շարագրուած՝ ըստ ամենայն հաւանականութեան՝ ոչ կասուու քան ի՞որ դարու սկիզբն<sup>4</sup>, Պոլկուպիտու Կեսարացի<sup>5</sup>, Զորք գրու կի-

4. Մ. Խորենացւոյ Պատմ. Հայոց, Նոր թարգմ. Առաւերէն Ս. Եմին, յէջ 132-133:

Հ. Համեմատ Խորենացւոյն հետեւակ փոխառութիւները թ. Փ. Սոկրատայ. — Խոր. Բ. 85. կ'իշր որդիացեան կոսուանիիանու, — Փ. Սոկր. գր. պր. Եղ. յէջ 498 ս (ի Վար. Ս. Սելլը) և Վենետիկեան. Հասարէ. նոյն Վարցւ: 1893, յէջ 24. — Խոր. Անդ. մարդաբարեաց, — Ս. Սոկր. գրչ. պր. Եղ. (յէկեղ. Պատմ.), յէջ 504 ս. — Խոր. Բ. 88. ամենապատկէ յարդարեաց, — Փ. Սոկր. (Եկեղ. Պատմ.), յէջ 555 ս. — Խոր. Բ. 57. Աղրարին կեկեցոյ (Ց. Առկերտան): — Փ. Սոկր. (Եկեղ. Պատմ.), յէջ 529 ս և շատ ուրեիչներ: Հմ. նոյն պէտ պր. Նորայրի վերյէշեալ յօդուածն ի և Հանդիւ Ամսօրեայ»:

5. Հմ. Հանդիւ Ամսօրեայ, 1894, Փերմուար, յէջն 53-67 կամ Խոս. Խոսէս (Supplément), յէջն 6-30:

4. KRAMBACHER, Geschichte der Byzantinischen Litteratur, յէջ 416.

5. Հմ. Հանդիւ Ամսօրեայ, 1894, Ապրիլ, յէջն 120-127 կամ Խոս. Խոսէս (Suppl.), յէջն 50-40:

սում։ Պր. Կարրիէր մինչեւ անդամ Սկիլ-դայ՝ մօտ, որ ԺՄՊ գարու մասնակիր է, խորենացոյ հետ նմանութիւններ կը զտնէ, թէ և ինքն և Հայոց Պատմութեան » շարադրութեան ժամանակը այնափ հեռուս չի մղեր։ Տեսարթեան համար գրանկ զիսնականն մէջ կը բերէ խորենացոյ բոլոր փոխառութիւնը վերեւ ցուցեալ աղբեացմէ, զնելով անծնց հետ ի համեմատութեան իրարանշիւր համապատասխանող բնագրերը ի «Հայոց Պատմութենէ»։

Խորենացոյն նախընթաց քննազատից մասին մեր առած ծանօթութեանց ի լրութիւն, աւելորդ չեմ համարիր մատնանիշ ընել հօս և այն հանգամանքը, թէ պր. Կարրիէրին ըրած տեղեաց ցուցմնին՝ վերոյիշարգեալ պատմական շարադրութեանց մէջ, ըստ երեւութիւն իրիւ մինչեւ իրեն զրութիւնն անծանօթ մնացած բաներ չեին։ Այդ համեմատական տեղին՝ և աղոնցմէ զաս շատ ուրիշներն ալ՝ իիստ լաւ ծանօթ էին, ինչպէս արգէն վերագոյն նշանակեցի, «Հայոց Պատմութեան» առաջին թարգմանողացն ի լատին՝ Վիստոն եղբարց, որը առաջին եղան որ անոնց վրայ ուշազրութիւն դարձուցին, թէպէս ոչ թէ նկատելով զանոնց իրիւն։ Մշլսիսի անմիջաբար գործածած աղբերդ, այլ իրիւն յիշատակարան՝ որ կը հաստատէին հայ պատմութիւն պատմաները։ Այսպիսիր են, օրինակի համար, անոնց մօտ կոչումներ և աեղեաց ցուցմններ ի Մատալայէ առ հետեւեալ զրութիւնը խորենացոյն պատմութեան — Ա. զրբին՝ Եռու զլ., Բ զրբին՝ 43, 76 և 88որդ զլ., և Գ զրբին՝ 42, 24, 29, 33 և 39որդ զուինները։ Վիստոն եղբարց արգէն ցուցաներէն զատ, պր. Կարրիէր իւր վերջնինթեր յօդուածին մէջ բերաւ կարձեալ շորս սրբի համեմատութիւններ եւս, որ են, Բ զրբին (խոր.) 43 (ԸՏ), 79 և 87որդ զուիններու և Գ զրբին 41որդ

զլեցն։ Ազոնց վրայ ես կրնամ յաւելուզ դեռ մի համեմատութիւն եւս՝ Բ զրբին մի և նոյն 79որդ զլեցն, որ բաց ի մեր իրն զրոյն նպաստելու, ունի նաև ուռանձինն կարեւորութիւն խորենացոյն բնագիրը ուղղագրելու գիրս գիտմամբ, և է այս։ — Խորենացին հակառակ վկայութեան Եւսերիսով Քրոնիկունի<sup>1</sup>, որ կարու կայսեր վահճանելուն տեղը ի Միջագետս կը զեէ, ինքն այդ տեղոյն Եթինակն (<sup>2</sup>) անունը կու տայ։ Մալալայի ասելով, յորմէ արգէն անզամ մը այս զիսոյս մէջ օգտուած է հայ պատմագիրն, կարու մեռած է՝ արեւելքն ի Հռոմէ զարձած ժամանակ Հոնաց գէմ մղած պատերազմին մէջ։ «... Կարօս... նոստրէքիչ ծէ Ե՞րաշ քայլաց պատմական շարադրութեանց մէջ, ըստ աւելորդի խորեն մինչեւ իրեն զրութիւնն անծանօթ մնացած բաներ չեին։ Այդ համեմատական տեղին՝ և աղոնցմէ զաս շատ ուրիշներն ալ՝ իիստ լաւ ծանօթ էին, ինչպէս արգէն վերագոյն նշանակեցի, «Հայոց Պատմութեան» առաջին թարգմանողացն ի լատին՝ Վիստոն եղբարց, որը առաջին եղան որ անոնց վրայ ուշազրութիւն դարձուցին, թէպէս ոչ թէ նկատելով զանոնց իրիւն։ Մշլսիսի անմիջաբար գործածած աղբերդ, այլ իրիւն յիշատակարան՝ որ կը հաստատէին հայ պատմութիւն պատմաները։ Այսպիսիր են, օրինակի համար, անոնց մօտ կոչումներ և աեղեաց ցուցմններ ի Մատալայէ առ հետեւեալ զրութիւնը խորենացոյն պատմութեան — Ա. զրբին՝ Եռու զլ., Բ զրբին՝ 43, 76 և 88որդ զլ., և Գ զրբին՝ 42, 24, 29, 33 և 39որդ զուինները։ Վիստոն եղբարց արգէն ցուցաներէն զատ, պր. Կարրիէր իւր վերջնինթեր յօդուածին մէջ բերաւ կարձեալ շորս սրբի համեմատութիւններ եւս, որ են, Բ զրբին (խոր.) 43 (ԸՏ), 79 և 87որդ զուիններու և Գ զրբին 41որդ

Դարձաւալ, Վիստոն եղբարց ըրած են տեղեաց ցուցուունց նաև և ի Զատկական Քրոնիկունէն առ խորենացոյ այն զլուիններն՝ զոր արգէն նշանակեցինք Մալալայի առթիւնապէս և ի Քրոկոպիուէ առ 41<sup>st</sup>, 2, 3, 4, 8 և 30որդ զլուիններ Բ զրբին և 35որդ Գ զրբին խորենացոյ։ — Ի Սվիդայէ՝ առ 6 և 49որդ զլ. Ա. զրբին «Հայոց Պատմութեան» ի բառու Ծիբոլլա և Խանան։ Նոյն իսկ Աղ. Կարրիէրի ցուցումն ի Սալուսիոն<sup>3</sup> նկատմամբ ափրկեցի մարդիտանաց

1. Քրոնիկոն, Բ, յէջ 169, միածալ, Հրատու։

2. ՄԱԼԱԼԱ, Աւեգերեան, Վենետիկի, 1818.

3. De bello Iugurthi, XVIII. Հմ. յէջ 157

Հատիկի թարգմանութեան խորենացոյն ի Վիստոնաց, ուր մէջ բերուած է աեղեաց պատկանաց կոչումների Մալալայի աստիտուտ։ (Հայերէն թարգմ. վերջնոյն ի հ. Արքահամեմ Շարեան, Հրատ. Վէնետիկի, 1856, յէջ= 176-178)։

4. Անց։  
5. Ստորակարգեալ դուխներն պառւած են ըստ Վենետիկեան հրատար. 1865 տարւոյն։ զի Վիստոնաց հրատարակութեան մէջ դիւնց բաժնուու ուղակա ինչ ատրբեր է։

ընդ մարս, պարսիկս և հայս ունեցած ազգակցութեան, արդէն ի ժամանակին ցուցած են վիտանոք, խորենացւոյն Բ զրքին 4 Ե՞րբ զլույն միջի «Մար» բառին նստիրած ծառօթութեան մէջ :

Ես, մինչդեռ մատնանիշ կ'ըլլամ զասախոսն կարրիերի՝ խորենացւոյն Պատմութեան ուսումնասիրութեան համար կասարուած՝ առաջին փորձերը չյիշատակելուն վրայ, բնական է՝ առ այս բերուած չեմ՝ փրանկ զիտականին քննազատական յօգուածոց նշանակութիւն և արժանիքը փորդիկացնելու կամքով; իմ նպատակս եղած է հետեւիլ, թէ և վաղվազով ոճով, խորենացւոյն քննազատական ուսումնասիրութեան մէջ հետ զետէ ծագող զաղափարաց յաջորդական կարգին, սկսեալ անոր առաջին քայլերէն, և անոնց մով յայտնի ընել, որչափ այս կարելի է, իւրաքանչիւր հետազոտողի կամ քննազատի մասնակցութեան չափը՝ իրենց հասարակաց աշխատասիրած գործոյն մէջ: Այսոյ է, որ Աղ. կարրիերէն շատ կանուխ յայտնուած են երկայութիւներ խորենացւոյն Պատմութեան արժանահաւատութեան և նորա ապրած ժամանակին նկատմամբ. բայց գիտնական հայագիւն մեծ սրամուութեամբ օգտուցաւ առեւել փաստերով, յորոց ոմանց մինչեւ իսկ ի պաշտպանութիւն հայ պատմագրին գործածուած էին, և ըրած յատակ և մատչելի բարգաւաճմամբ՝ նոր լուսաւորութիւն առւանդություն: Այսուեւեւ գոզես անկարելի իսկ է Մոլիխի խորենացւոյն մասին իրեւ Ե՞րբ զարու մատենազրի վրայ խօսիլ. նա յետ մղուած է մինչեւ Է՞րբ զար, կամ նոյն իսկ մինչեւ Ը՞րբ զարուն ալ առաջին տարիներն, ինչպէս վերջերս որոշակի յանզեցւոց Աղ. կարրիեր իւր առեւութիւնը<sup>1</sup>:

Բովանդակելով մեր այս առեւութիւնը ի պատմութիւն քննազատական ուսումնասիրութեան խորենացւոյն, որ տեւած է աւելի քան զար և կէս ժամանակ, պէտք կը համարիմ զիտել՝ որ, Հայոց պատմութեան և ընդհանրապէս Առաջազդիր Ասից համար, այսչափ

կարեւոր եղած խնդիրներո, նկատմամբ ժամանակին՝ թէ երր ապրած է հայ պատմազիրն և նկատմամբ արժանահաւատութեան իւր պատմական երկասիրութեանն, պիտի չկարենան վերջնական լուծումն առնուլ, մինչեւ որ ըստ կարեւոյն շուստմնասիրութին այդ առեղծուածային հեղինակին ամենայն աղբերը: Այս պէտք է ի տեսութեան ունենալ՝ որ, բաց ի (ըսենք) յայանի աղբերացմէ, զորս ինքն խորենացին յիշած է, նորու մօտ կան ոչ սակաւ զարանի կամ ծածկուած աղբերը, որոց յայտնութիւնն կրնայ նոր լոյս սփենէ հայոց պատմութեան և զրականութեան լրաց: Աղեքս, կարրիեր իւր տեսութեան ներքոյ առաւ յունական աղբիրներէն մի քանին և անոնց վրայ հիմունելով յառաջ բերաւ իւր եղակացութիւնը: Այժմ արժան է սկսիլ հայկական աղբերաց ուսումնասիրութիւնը, որոց վրայ կայացած է այսուհետեւ վերջին խօսք մ՛ըսել խորենացւոյն նկատմամբ:

Առաջիկայ հետազօտութեանս մէջ փորձ մը եղած է այլպիսի ուսումնասիրութեան հայկական և մասամբ ալ մի քանի յունական աղբերաց, բայց չափոյ ասոնց վերաբերութեան առ հայկական վկանի ի Պատմութեան Հայոց» Մոլիխի խորենացւոց:

\* \*

Հօս առարտելով մեր բնրերցողաց խոսացուած Մեծապտ. պր. Գրիգոր Խալարեանցին սոյն ՆերԱԽՆԹԵԱՆ բարգմանութիւնը. առելորդ լենք համարիր յնեւ սուրբեն և նետեւեալ փոքր հասուչածն, (նոյն դրին 45–46 էկն առած), յորում Մեծապտ. հեղինակն որոշ կը բացատրէ իւր ունեցած նպատակն այս իւր ուսումնասիրութեանը ձեւը զարկած ժամանակ.

Իրեւ նկամ մեր այս հետազօտութեան, պիտի մինչ մանրամասն զնել, և որչափ կարելի է ստուգել և բացատրել՝ նախ, թէ արդեօց Բնէ են այդ հնաւանն զրյոյցը առ մատնանիշ կ'ըլլայ միշտ խորենացին, և թէ յիրաւի անոնց մէջ կը բովանդակութին ծողովրդական հնութիւնը: Երկրորդ, թէ ար-

1. NOUVELLES SOURCES. յէջ 47.

գեօք հըշափ հին և հաւատարիմ են՝ թէ  
ըստ ձեւոյն և թէ՝ ըստ պարունակութեան՝  
այդ երգը կամ վեպը, զորս մեր պատմա-  
գիրն ժողովրդական կը կոչէ, և թէ արդարեւ  
հայ երգուաց կը պատկանին անոնց մէջ  
ամիտիուած այլաբանութիւնն (allégories),  
առ որս յաճախ կը յլէ զմեզ խորենացին,  
Երրորդ, թէ արդեօք խորենացին իրօց որ  
աղքիրներով օգտուած է իւր «Պատմիթեան»  
վիպական հասածները շարպուելու համար։  
— Որպէս զի հնարաւորութիւն տանց ըն-  
թերցողին մօտէն ծանօթանալու այս վիպա-  
կան ըստուծ տատաշին հեն, որ և մեր ա-  
սաջիկայ հետազօտութեանս նիգծն է, ես  
իրաբանչիր զիսոյն սկիզբ պիտի կարգեմ  
ի խորենացոյ առ նոյն զուփը վերաբերեալ  
քնազիրն (ոռու ժարգմանութեամբ) է և ապա  
կ'անցնիմ անոր քննադապութեան։

Թրգմ. Հ. ԳԻՒՆՍԻՈՆ Պ.



### ՈՒՂԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հ ԺԻՏԱԿԱՆԻՆ, ՎԵՐԱԿ ԲԱՌԻՒՆ, ԵԽ յ ԳՐՈՑՆ ԱՄ ՆԱԽՆԻՍ

**Զ** նշին ինդիր մ'է առաջինն, սղագ-  
դրական հարց մի, եւ այս քանին հասուած-  
ներ նուիրեցան անոր իւաղմիշոյի մէջ ի զա-  
նազան անձանց և բայց ո՞չ. թէ սղագդրա-  
կան ինդիրը սրպիսի մտադրութեան կարօտ  
են մեր օրեր՝ կը զգան այն անձինք՝ որ կը  
սիրեն մայրենի լիզուին մաքրութիւնը, Այն-  
պիսի տգեղ սխալներ կը գործուին այժմ՝  
յաճախ որոշ զրութեամբ, մանաւանդ օտար  
անուանց ուղղագրութեան մէջ, եւ նոյն իսկ  
ի նշանաւոր բանափրաց, որ կարելի չէ  
շխսուալնել այսպիսի ինդրոց յուզման պէտ-  
քը. որոց ընկհանուրին վերայ հոս աեսու-  
թին մի ընելը նպատակէս դրոր է և

Միհայն մի միտական մասնիկ է երեց  
նորահնար ձեւեր սաւացած է, լի<sup>1</sup>, լը, լ'<sup>2</sup>,

որք ոչ միայն ի գործածութեան են, այլ  
եւ պաշտպանուեցան իսկ — թէ եւ առանց  
հասաստութեան — թաշովնի մայիսի եւ  
յունիսի պրակաց մէջ, ինչպէս տեսանք ար-  
դէն, որոց պատասխանեցի նոյն յունիսի մէջ  
նախորդ հաստումովի, խստովանելով չի  
ձեւին պէտքն արդի լեզուի մէջ, եւ ցոյց  
տալով լը եւ լ' ձեւոց անպիտանութիւնը։

Եթե այդ պատասխանոյս տեսայ ուրիշ  
երկու եւս յուլիսի եւ սեպտեմբերի մէջ, գրութ  
չեւ տեսած իմ տողերը ըստ Աստունց ա-  
ռաջնորդ մէջ ակը լուսական հա-  
մաձայն չըլի մերժման մէջ, կը հաստատէր  
եւ ինը լ', համարելով զայն ոչ պարզ չ.  
այլ լի ձեւին սղութն. չ'երթար, չ'ուսեր'ն  
իրը չի երթար, չի ուսեր : Բայց իրօց՝

յի ծանրանոյց եւ այլ օրինակները չեն մեկ-  
նուիր «չէ ի ցաւի, որ չէ ի ծանրանոյց» : Այս  
անդամ կը յաւելում, թէ յարմարագոյն է  
մեկնել այն երեւութիւն՝ որով ուսմէին ը տառը  
երեսէն ի քի փոխէ, դիմար, յիսանակ, սիպի-  
տակ, սիկի (փոխանակ բնիկ որպիտակ, որկի  
ձայից, զոր տես ի թազմ. նն., 529). ըստ  
այսմ եւ և ըցաւի, ըցանրանոյց ս փոխաներ  
են և չցաւի, չինանրանոյց», որոց յի յեռոյ  
զամաներէ ։ Ի մասին Մշակի օրինակն  
«Չեր յօշուածեր չի տպագրուի», համամիտ  
եմ Բայրունին հնես՝ զայշ կամ մանուանդ  
և չտպագրուի» ընտրելու մէջ, որ աւելի տրա-  
մարան է նաև որիքը գերեայն չի տպա-  
գրուի կամ տպագրուի ս, յորում յի մասնը-  
կան յանձնահա դիմաոր բայի զօրութիւն է  
արաւած. բայց եւ աւելի տրամարան կը հա-  
մարեց չնենք մնել կամ լինեն՝ եւ զայշ  
նմանին, քան յարգելի բանասրին յործածած  
«չէք չնենք» ։ յորում ննենք յագ. ա. գէմ, եւ  
յինի՞ եզ. ք. գէմ (գէմի ըստ կազմութեան),  
ըստորվոյն հակառակ են միմանց ինչներ եւ  
«չէք տայ», չնեն մնայն եւ այլը: Մանօթու-  
թեանն առաջին մաքն առիթի ի դեպ է յիշեց-  
նել եւ զայշ՝ որ հին լեզուն ընդհակառակն զի  
կը փոխէ ը. Կորինթոսը Կորինթոս խօսահա-  
շապուհ ը Ստահրաշապուհ, նիշան նըշան, սի-  
փահ սրպայ, (տես եւ ի թազմ. անը): Երկու  
տասէց լուրդութիւնը կը բերէ՝ որ մեր ի զիրը  
յեւրոպ. լեզուն թարգմանեմք և, Mikhithar եւ  
այլն, եւ ոչ արմատացած սխալով է. Mekhithar:  
2. Այդ պայմանի մէջ եւս յի ձեւի կարեւու-  
թիւնը հաստատեցի անցելու անամ, ցոյց  
տալով չի կամ պարզ չըրի անպատեհութիւնը,  
որոյ հակառակը շնեն կարեւութէ թէ կարելի լինէ  
պաշտպանէլ օրինաք:

1. Անցեալ անդամ խօսելով յի ձեւի ծագման  
մասին, կ'ըսեէլ թէ նախնեաց ամէկ և չի ցաւի, որ